ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Կոմիտասի երգերի ուսուցումը դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Կաֆունց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… 2
Գլուխ 1. Կոմիտասի երգերի ուսուցումը դպրոցում……3
1.1 Դասավանդման նպատակը……4
1.2 Դասավանդման խնդիրները. 5
Գլուխ 2.Կոմիտասի երգերի դասավանդման նպատակներին հասնելուուղիները դպրոցում…… 6
2.1 Ունկնդրում……6
2.2 Խմբային երգեցողություն ……8
2.3 Երգերի ընտրությունը..... 8
2.4 «Չինար ես»…… 9
Գրականություն. 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ-անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողությունների ձևավորմանը, ուրոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգերաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Ինչ վերաբերում է Կոմիտասի երգերին, ապա, ներկայումս, ապազգային երևույթների տարածման բուռն շրջանում, դրանց դասավանդման անհրաժեշտությունն ու նշանակությունը էլ ավելի է մեծանում: Անգնահատելի է Կոմիտասի հավաքչական ու գիտական աշխատանքը: Նա ժողովրդական երգերը գրառել է ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի վերլուծական դիտողականությամբ:

Երաժշտական բանահյուսության մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը (հեթանոս հավատալիքներին առնչվող հորովելների եղանակները, «Սասունցի Դավիթ», «Մոկաց Միրզա» վիպական ասերգերը, անտունիներն ու հոգևոր տաղերը) համարվում է պատմամշակութային խոշոր հայտնագործություն, իսկ հավաքած ավելի քան 3000 գեղջկական երգերը՝ հայ ժողովրդական երգարվեստի անթոլոգիա: Կոմիտասը տեսական աշխատություններում բացահայտել է ժողովրդական երաժշտության կենսական հիմքերը, բնութագրել հայ երգի գեղագիտական արժանիքները, վերլուծել տեսակներն ու կառուցվածքային հատկանիշները: Նա

հիմնականում գրել է մեներգային և խմբերգային երգեր, որոնք սերում են ժողովրդական կամ հոգևոր սկզբնաղբյուրից «Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը։ Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի։ Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան»։ (Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.)

ԳԼՈՒԽ 1. ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԳԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

«Աշխարհի ամենաազդեցիկ լեզուն երաժշտության լեզուն է, դա ամենակարճ ճանապարհն է, որպեսզի մեր ինքնությունը վերադարձնենք մեր ժողովրդին»։

Ա.Շահնազարյան

Պետության կողմից կրթադաստիարակչական աշխատանքներում սովորողների մշակութային և դրա մաս կազմող երաժշտական դաստիարակության հիմնախնդիրը մշտապես եղել է կրթական և գերատեսչությունների ուշադրության կենտրոնում։ Այդ աշխատանքների ճիշտ կազմակերպումը տարբեր ժամանակներում ստացել է տվյալ ժամանակին բնորոշ լուծումներ։ Դաստիարակչական աշխատանքը՝ որպես շարունակական և երկարատև գործընթաց, բավական ընդգրկուն է և ոչ հավասար բոլոր ուսումնական հաստատությունների համար։ Երաժշտական կրթությունը մեծ նշանակություն ունի երեխայի աշխարհայացքի ձևավորման հարցում։ Բայց ճիշտ երաժշտական ճաշակի ձևավորման և զարգացման համար պետք է երգերը զգուշորեն ընտրվեն, դրանք ոչ միայն պարտադիր պետք է լինեն բարձրարժեք, մեղեդային և հաճույք պատճառեն երեխային, այլև պետք է արտահայտեն մատչելի մտքեր, զգացմունքներ և տրամադրություն՝ համապատասխանեն սովորողի տարիքային առանձնահատկություններին։ Երեխան չպետք է երգի ինչ պատահի։ Երգի տեքստը պետք է՝ համահունչ լինի մանկական խառնվածքին, պարունակի նրան հարազատ ու հասկանալի իմաստ։ Սովորողը պետք է անպայման հասկանա թե ինչ է երգում, այն պետք է անցկացնի իր գիտության պրիզմայի միջոցով։ Երգելիս երգողը ոչ միայն ձայնով՝ այլև աչքերով պիտի արտահայտի իր երգի իմաստը։ Միայն այդպես է հնարավոր որոշակի երգչային կուլտուրա ձևավորել, զարգացնել երաժշտական ճաշակը։ Դա նաև օգնում է զարգացնել բանավոր վարժ խոսքը, մտքերը գեղեցիկ շարադրելու ունակությունը, այսինքն՝ ձևավորում է խոսքի ավելի բարձր կուլտուրա։

1.1 Կոմիտասի դասավանդումը դպրոցում նպատակ ունի

- Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր։

- Ձևավորել և ուղղորդել սովորողներին դեպի արդյունավետ երաժշտաստեղծագործական շարժում, իմպրովիզացիա և այլն։
- Երաժշտական գործունեություն իրականացնել գործնականորեն կիրառելով ձեռք բերված երաժշտատեսական գիտելիքները և հմտությունները։
- Դաստիարակել աշխարհի նկատմամբ գեղագիտական վերաբերմունք, երաժշտական տեղեկատվության նկատմամբ՝ քննադատական վերաբերմունք։
- Ձևավորել և զարգացնել տրամաբանական, ստեղծագործական, կերպարային և ասոցիատիվ մտածողությունը, վերլուծական հմտությունը։
- Ձևավորել և զարգացնել երաժշտության գիտակ, ազգային ավանդույթների կրող, պահպանող ու սերունդներին փոխանցող սովորող։
- Ընդլայնել սովորողների երաժշտական և ընդհանուր մտահորիզոնը՝ շարունակել դաստիարակել երաժշտական ճաշակ, զարգացնել կայուն հետաքրքրություն այլ ժողովուրդների դասական և ժամանակակից երաժշտության հանդեպ, արժևորել մշակութային բազմազանությունը։
- Շարունակել զարգացնել կայուն հետաքրքրություն դեպի ճանաչողական գործունեությունը, զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները և կատարողական հմտությունները՝ հենվելով նրանց հետաքրքրությունների և հակումների վրա։
- Զարգացնել քննական մտածողությունը սեփական հիմնավորված դիրքորոշումը արտահայտելու, մյուսների կարծիքը լսելու, հարգելու, պատճառահետևանքային կապերը, վերլուծելու և որոշումներ կայացնելուհմտությունը։
- Դաստիարակել հատուկ վերաբերմունք և հետաքրքրություն մշակութային օջախների գործունեության նկատմամբ, դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտությունը ունկնդրելու մշակույթ։
- Ապահովել շարունակական կրթության և երաժշտության հետ հաղորդակցվելու հնարավորությունները բոլորն սովորողների համար։ Սովրողների դաստիարակության հիմնախնդիրը լուծելու նպատակով 2010թ – ից մեկնարկեց Հայաստանի Հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում «Երաժշտություն» առարկայի ներդրման գործընթացը առաջինից յոթերորդ դասարաններում։

Աշակերտները պետք է խորացնեն իրենց գիտելիքները ծիսական, հայրենասիրական երգերի, խաղերգերի, ժողովրդական երգերի, դրանց նշանակության և կատարման հմտությունների մասին ու սովորեն նրանցից

առավել տարածված նմուշները։ Կոմիտասի երգերի կատարումը կզարգացնի երեխային մեծացնելու ֆիզիկական և մտավոր զարգացվածությունը, բարձրացնելու և նրա բնականոն աճն ապահովելու գործընթացը։ Կոմիտասյան երգերի կատարումը կդաստիարակի երեխաների մեջ հայ լինելու հպարտությունը, որը ճիշտ մատուցելու դեպքում կապահովի նաև ոչ միայն իմանալու այլ պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու այդ արժեքը։

1.2 Դասընթացի հիմնական խնդիրներն են՝

Ծանոթացնել ծիսական, մանկական երգերի, դրանց ժանրերի, խաղերգերի, հոգևոր երգերի հետ։

- Զարգացնել երգերը հասկանալու, մեկնաբանելու հմտությունները։
- Զարգացնել Կոմիտասի երգերը կատարելու և արժևորելու կարողությունը, դաստիարակել սեր դեպի ազգային մշակույթը։ Դպրոցում ուսումնասիրում ենք Կոմիտասյան մշակումների հետևյալ ցանկը։

- «Նանիկ ասեմ բալիկիս» օրորոցայինը։
- «Հոյ նազան»
- «Անձրևն եկավ»
- «Էն առուն ջուր է գալիս»
- «Կաքավի երգը»
- «Քաղհան» աշխատանքային երգերի շարքը
- «Կռունկ» պանդխտության երգեր
- «Սարեն ելավ»
- «Գնա-գնա»։

Կոմիտասի մշակած «Գնա, գնա» ժողովրդական երգը ուսուցանվում է երկձայն, ինչպես նաև բնական կամ հարվածային նվագարանների միջոցով երաժշտառիթմական պատկերի արտահայտմամբ։

Գնա, գնա, ոտիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սարին, օ՜, յա՜ր ջան, յարին, օ՜, յա՜ր ջան,
Կարմիր խնձոր գոտիդ եմ, հա՛,
Յարին, օ՜, յա՜ր ջան, սարին, օ՜, յա՜ր ջան,
Դու ինձ մենակ չես թողնի,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սարին, օ՜, յա՜ր ջան, յարին, օ՜, յա՜ր ջան,
Ու որ երթաս, մոտիդ եմ, հա՛,
Յարին, օ՜, յա՜ր ջան, սարին, օ՜, յա՜ր ջան։

ԳԼՈՒԽ 2. ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԳԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Վերոնշյալ նպատակների իրականացումը տեղի է ունենում երաժշտության դասավանդման ընթացքում ուսումնական գործունեության տարբեր ձևերի միջոցով։Երաժշտական ուսումնական գործունեության ձևերը դասաժամին կամ դրանից դուրս սովորողի կողմից կատարվող գեղարվեստական գործունեությունն է՝ երաժշտությամբ ինքնաարտահայտվելու միջոց։

Երաժշտության մեկ դասաժամի ընթացքում իրականացվում է ուսումնական մի քանի ձևեր։ Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքում երաշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու, նրա մասին մտորելու, վերլուծելու կարողության զարգացումը։ Եթե տարրական դպրոցի սովորողի մոտ ուժեղ է երաժշտության ընկալման զգայական, հուզական կողմը (նա նկարագրում է միայն իր զգացողությունները և տպավորությունները), ապա միջին դպրոցում զգայականին ավելանում են նաև գիտակցականը։ Զգայական պատկերային մտածողությունից սովորողն անցնում է իմացական հասկացություններին, որոնք կազմավորում են երաժշտական մտքի խորությունը, գիտակցությունը, ձևավորում ու զարգացնում են սովորողի ստեղծագործական երևակայությունը։ Կոմիտասի երգերի ուսուցման ձևերն են՝

- Կոմիտասի երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմության քննարկում։
- Երգերի անհատական և խմբակային կատարում։
- Երաժշտառիթմական և պարային շարժումների դիտում։
- Անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա (շարժումային և երգային հանպատրաստից հորինում)։
- Ուսումնական էքսկուրսիաներ՝ թանգարաններ, համերգասրահներ և այլ մշակութային օջախների այցելություններ։
- Կոմիտասի երգերի փառատոնների կազմակերպում։

- Կոմիտասի երաժշտության ունկնդրում և երաժշտության պատմություն։

2.1 Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, որովհետև այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելը և զարգացնելը բավականին դժվար է։

Այն զարգացնում է ունկնդրելու կարողությունը, ուշադրությունը, վերլուծական մտածողության ընդունակությունը և համեմատելու կարողությունը։ Երաժշտության ունկնդրման միջոցով ցովորողը ծանոթանում է նաև երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները և այլն։ Սովորողը հասկանում է, որ ունկնդրել չի նշանակում միայն լսել, պետք է ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել երաժշտությունից ստացած տպավորությունները։ Դրսևորել հուզական արձագանք, ինքնուրույն կարծիք հայտնել, միայնակ կամ խմբով ներկայացնել ուսումնասիրությունները, հետազոտական կամ նախագծային աշխատանքները և այլն։

Կոմիտասի երգեր դասավանդելու ժամանակ, բացի դասի օրինակելի կառուցվածքից, ուսուցիչը պետք է տիրապետի երգի ստեղծման պատմությանը։ Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նաև լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը։ Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորությունները ու զգայական ընկալումը։ Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաների ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիայով երգելու կարողություն և այլն։

2.2 Խմբային երգեցողության միջոցով ձևավորվում և զարգանում է սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ շնչառությունը, ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն և երկձայն երգելուկարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար։ Խմբային երգեցողությունը զարգացնում է նաև միշարք բարոյական արժեքներ՝ բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն,

միասնականություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողություն: Տարրական դպրոցում սովորողները ծանոթանում են նաև ձեռքի նշաններով երգեցողությանը.այն զարգացնում է սովորողների երաժշտալսողական պատկերացումները: Ձեռքի նշանները նախապատրաստում են նաևմիաձայնությունից անցումը բազմաձայն երգեցողությանը: Երգի պատմության ուսումնասիրմանը և դրա ունկնդրմանը սովորաբար հաջորդում է անհատական և խմբային երգեցողությունը: Ուսուցիչը կամ նախապես պատրաստված տեխնիկական միջոցներով հնարավորություն է տալիս երեխաներին լսել երգը, կամ անձամբ է այն կատարում ամբողջությամբ:

Կարող է նաև օգտագործել երգի բառերը բոլորին անհատական բաժանելու միջոցը: Ուսուցիչը կատարում է առաջին տան խոսքերը, ներկայացնում է բառերի հեղինակինև երաժշտության հեղինակին, եթե երգը ունի նաև այլ պատմություն, ապա պետք է ներկայացնել նաև այդ պատմությունը աշակերտներին ավելի տեղեկացված դարձնելու և հետաքրքրությունը շարժելու համար: Այնուհետև խնդրել առավել սուր լսողություն ունեցող աշակերտներից մեկին դասարանի կենտրոնից կատարել երգը, իսկ կրկներգը երգում են միասին: Այնուհետև դասարանով երգը կատարում են միասին: Նույն սկզբունքով սովորում են նաև երկրորդ տունը և երգն ամբողջությամբ:

Երաժշտական գործունեության մյուս ձևը երաժշտառիթմական և պարային շարժումն է, որը մպաստում է սովորողների հոգևոր և ֆիզիկական ուժերի ներդաշնակ զարգացմանը, ժամանակի և տարածության մեջ միշտ կողմնորոշվելու ունակությանը: Գործունեության այս ձևի ընթացքում սովորողը կատարում է ունկնդրվող կամ կատարվող ստեղծագործությունների ռիթմական նվագակցություններ, սովորում և կատարում են պարային տարրեր, պարային շարժումներ կամ ամբողջական պարեր: Երեխաների սիրած գործունեության տեսակներից է խաղը, մասնավորապես երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում երեխաների երաժշտառիթմական պատկերացումներըզարգացնելու գործում:

2.3. Երգերի ընտրությունը

Մեզ հասել են Կոմիտասի մշակումների 3000 ից ավելի երգեր, որոնք նա գրառելէր իր ընտրությամբ։ Վաղուց փորձում էր այդ ամենի միջից էլ առանձնացնել ընտրագույնը։ Իր մոտ եկող- գնացողի համար իրար հետևից երգում էր զանազան երգերև խնդրում էր նշել, թե ամենից շատ որ երգերն են հավանել։ Իր նման իմացություն, ճաշակ ու հանճար ունեցող մարդու համար նույնիսկ դժվար էր ընտրելը, քանի որ բոլոր երգերն իր հարազատ զավակներն էին։ ՀՆարավորության դեպքում կարելի է հատորներով տպագրել հարյուրավոր երգեր և ցանկացողը կընտրի իր համար, բայց առաջին՝ հնարավորություն չկա դրա համար, երկրորդ՝ այդդեպքում միմիայն մասնագետները կարող են օգտվել, երրորդ՝ հարկավոր է տարածել ընտրված երգերը Հայաստանով մեկ, նաև աշխարհին է պետք ներկայացնել օրինակներ և որ ամենակարևորն է՝ պետք է ունենալ չափանիշներ, որոնք անշփոթելի կերպով կարտահայտեն հայ երաժշտության բուն էությունը։ Բոլոր երգերը գեղեցիկ են ու անկրկնելի, յուրաքանչյուր երգ մի յուրահատուկ նկար է, որ պարփակում է աննման զգացում, բայց առանձնանում են այն երգերը, որոնց մեջ կար նաև մի ուրիշ բան՝ անսահմանություն և նույնիսկ մի քանի անգամ կատարելուց կամ լսելուց հետո դժվար էր ասել, թե այդ երգը ընկալվեց, ճանաչվեց ամեն անգամ մի նոր բան էր բացահայտվում, և վերջ չուներ դա որքան խորանում ես՝ տակը չի երևում։

Կան հրաշալի երգեր, որոնք հենց այն են, ինչպես լսվում ու ընկալվում են։ Կոմիտասը նկատեց, որ թեպետ մարդկանց ճաշակները տարբեր են, սակայն կան երգեր, որ միշտ ամենքի կողմից առանձնացվում են։ Այսպիսով հայ երաժշտության լավագույն գիտակը կրկին ու կրկին ստուգում էր արդյունքը։ Առանձնացված երգերից յուրաքանչյուրը կարծես լիներ մի մասը օրինակ, որ ծնունդ է տվել հարյուրավոր երգերի և որի ելևէջները մնացել են որպես մի նախաստեղծ նյութ, որի մեջ խտացված ու թաքուն ամփոփված են իրենից ծնված բոլոր երգերի էությունները։ Այդպիսի երգերից է «Չինար ես»-ը։

« Չինար ես»

2.4 Սիրո երգ է «Չինար ես»-ը, խորհրդավոր է այս երգը։ Կարծես հերկած դաշտերի միջով մանրիկ-մանրիկ քայլերով անվերջ հեռանում է աղջիկը, գնում է, գնում ու հորիզոնից այն

կողմ չի անցնում…Եվ մյուս ծայրից կանչում է տղան, կանչում է լուռ ու խոր՝ չինչած ելևէջով, խաղաղ ու անսահման շնչով վաղորդյան ցողը վրան՝ դողում էվարդի թերթը, և կանչող ելևէջը ծնվում է տիեզերքի այն ափից, որ հենց սիրո տունն է.
չէ, սիրո տաճար չէ, ինչպես ասում են, սիրո վեհապանձ ու ցոլարձակող տաճարը չէ, գետնափոր պարզ տուն է՝ հողին ու քարանձավին ձուլված, և չի էլ նկատվում, թե այնտեղ հենց սիրո բույնն է՝ տիեզերքի մայր խորքերում թաքնված…Եվ այնտեղից ալիք-ալիք, խաղաղ ու վախի հասնող խորհրդավորության հասնում են հնչյունները ու անդադար կանչում մանրիկ-մանրիկ քայլերով անվերջ հեռացող աղջկան։ Ու այս ամենը թոթովում է հողեղեն բարբառը.

Չինար ես, կեռանալ մի, յա՛ր, յա՛ր, յա՛ր,
Մե՛ր դրռնեն հեռանալ մի. յա՛ր, յա՛ր, յա՛ր.
Յա ր, նա նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ, նա՛յ։

Նայ նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ։
Յա՛ր, քո աստված կըսիրես, յա՛ր, յա՛ր, յա՛ր։
Հեռու ես, մոռանալ մի, յա՛ր, յա՛ր, յա՛ր։ Յա՛ր,
նա նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ, նայ
Նայ նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ։

Երբ Ալեքսանդր Սպենդիարյանը ծանոթացավկոմիտասյան երգերին, ապշեց,միթե հնարավոր է, որ գյուղերում այսպիսի քնարական մեղեդայնությամբ երգեր երգեն, և համոզվելու համար նա անձամբ շրջեց հայկական որոշ գյուղերում։ Իհարկե նմանօրինակ շատ հրաշալի երգեր լսեց, բայց «Չինար ես»-ի նման երգ չլսեց, ուստի իր հուշատետրում գրեց «Կոմիտասը մեծ միստիֆիկատոր է»։ Արդեն հետո շատ կոմիտասագետներ այս ձևակերպան համար ասեցին.Սպենդիարյանը չէր լսի նման երգ դա նման է,որ մարդը կարթը գցի օվկիանոս և որսա գիտությանն անհայտ մի հազվագյուտ ձուկ։ Նման բացառության հանդիպելու համար, առնվազն պիտի լինես բացառիկ ձկնորս կամ հույսդ դնես պատահականության վրա։ Բացի այդ, «Չինար ես» երգողը չի էլ երգի, եթե նրան կանչեն նշանավոր կոմպոզիտորի մոտ երգելու հանձնարարականով։

Սպենդիարյանի նման կարող էր գյուղերով շրջել նաև մի հնագետ, այստեղ-

այնտեղ փորել տար, բան չգտներ ու հայտարարեր, որ Հայաստանում հողի տակ ոչ մի հնավայր էլ չկա։ Բայց Սպենդիարյանին կարելի է հասկանալ.չէ որ ողջ կյանքը գյուղերով շրջած, երգերին «դարանակալած» Կոմիտասին միայն մեկ անգամ է հանդիպել «Չինար ես»-ը՝ ի տարբերություն շատ ուրիշ երգերի, որ ամենուրեք երգվում էին։

Հետագայում Կոմիտասը «Չինար ես»-ը գրեց ձայնի և դաշնամուրի համար.նա ստեղծեց մի նվագակցություն, որ երգի բնօրինակի գրանցման շարունակությունն էր։ Կոմիտասը գործը հասցրել է այնպիսի բարձունքի, որ այն իրավմամբ համարվում էր նաև իր ստեղծագործությունը.այդ ժառանգությունը նույնացավ Կոմիտասի անվան հետ, թեպետ ինքը համեստորեն նշում էր.«Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ»։ Նա այնքան խստապահանջ էր, որ իր «դաշնակած» գործերն էլ էր ցույց տալիս ոչ երաժիշտ մարդկանց ու հաշվի էր առնում ամենքի կարծիքը։ Այդ մասին գրում է «Դրա համար շատ թանկ է իմ սրտակից բարեկամներիս յուրաքանչյուր, նույնիսկ չնչին համարված նկատողությունները։ Ես կատարյալ չեմ, ինչպես և բոլոր մարդիկ, բայց կատարելության ձգտող՝ նույնիսկ այն դեպքում, երբ մերժում եմ մեկի կարծիքը.թեև մերժում եմ այն, բայց ինձ մտածել է տալիս, թե ինչու այս կամ այն կտորը դուր չի եկել մեկին կամ մյուսին, և ես աշխատում եմ հարցը լուծել»։

Կոմիտաս-մանկավարժի առաջ քաշած երաժշտագիտական համակարգի դրույթները այսօր էլ արդիական են:Կոմիտասը կարևորում էր ոչ միայն ժաղավրդական,այլ նաև հոգևոր երաժշտության դերը աճող սերնդի դաստիարակության գործում,երաժշտագիտական ուսուցումը սկսելով ազգային երաժշտության առանձնահատկությունների հիմքով:Իր մանակավարժական գործունեության համար նախատեսված երգացանկում Կոմիտասն ընդգրկում էր բովանդակությամբ և գեղարվեստորեն բարձրարժեք ստեղծագործություններ,ազգային երգարվեստին ամենաբնորոշ ու տիպական նմուշներ:Կոմիտաս վարդապետը կարևորում էր պարի հսկայական դերը աճող սերնդի գեղարվեստական,գեղագիտական դաստիարակության գործում:Ռիթմը,շարժումը,պլաստիկան,ըստ Կոմիտասի,մեր կյանքի անբաժանելի մասն են կազմում:Որքան իմաստավորված զգացմունքներն արտահայտելու ձևերը,այնքան զարգացած են ազգի գեղագիտական ընկալումները:Կոմիտասի երաժշտագիտական հիմնադրույթներից կարևորագույնը աճող սերնդի բարոյահոգեբանական ներդաշնակ զարգացման խնդիր էր։

Հայ երգը իր հուզական ամբողջությամբ ներկայացնելու նպատակով,Կոմիտասն

նաև հասարակայնորեն երգեց այն:Հնրեցրեց ոչ միայն անզուգական մանկավարժ,այլ նաև որպես երգիչ՝պատգամ թողնելով հայ աշակերտի երգի ոճական ճշգրիտ կատարման սկզբունքները.<<Աշակերտի երգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց,ուր դաս են առնում ամենքը ամեն ժամանակ,երբ կարիք են զգում>>:

Տիրապետելով այդ <<դպրոցի>> օրենքներին ու նրբություններին՝իր թավշյա ձայնով Կոմիտաս-երգիչը զուսպ,խորունկ արտահատչականությամբ սովորողին հասցնում էր հայ գեղջուկ երգի հուզական աշխարհը,ինչի շնորհիվ հայ երգի խոր ներգործության մասին ժամանակին գրեցին օտարազգի նշանավոր արվեստագետներ:

<<Պարն ու մանուկը>> հոդվածում մեծ երաժիշտը գրում է.

<<Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը,հանցանքը ձերն է,որովհետև չեք կրցաց հասկնալ անոր հոգին,պետք է որ իջնել մինչև անոր բացվող հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել>>:Կոմիտասը բարձրացրեց մանուկի հոգու պես մաքուր ու ջինջ հայ երգը՝այն հասցնելով դասական կատարելության:Իր բազմաբեղուն գործունեությամբ Կոմիտասը մշտապես եղել է իր ժամանակակիցների,իրեն հաջորդաց երաժշտագետների մանկավարժների մշակութային գործիչների ուշադրության կենտրոնում:Յուրաքանչյուր հետազոտող ուսուցչուհին յուրովի է բացահայտել Կոմիտասի հանճարեղ մշակումները,հայտնությունները իր ներդրումը բերելով զարգացման ձևավորման ընթացքի համար:Գրվել են գիտական բազմաթիվ հանրամատչելի հոդվածներ և մանրագրություններ:Մեծ երաժշտի ժառանգության և ստեղծագործական,և երաժշտագիտական գնահատումն ու իմաստավորումը կապված նրա ձեռագրերի հայտնաբերման, հրապարակման հետ:

Կոմիտաս «Հոդվածներ և ուսումնասիրություններ» Պետ.Հրատ.,Երևան,1941

Աշխարհը շատ աղքատ կլիներ,եթե հակոց մեջ չծնվեր Կոմիտասը:Այո,ոչ միայն հայոց աշխարհը,այլ նաև ողջ աշխարհըաղքատ կլիներ առանց այդ հանճարեղ մարդու,ով չէր էլ հավակնում ինչ-որ բարձունքների հասնել:Մեծն Կոմիտասը չէր էլ հասկանում,թր ինքն է լինելու այն անհատը,ով մարգարիտներ կբաշխեր ազգին և մեզ կծանոթացներ ինքներս մեզ հետ:Երբ համաշխարհայնացման ալեկոծություններում փորձեր ենք անում գտնել զուլալ ազգայինը և այն տեղավորել համամարդկային անդաստանում,ապա Կոմիտասի ավետը լիովին բավարարում է և հիացնում:

Մեծ երաժշտապետը յուրօրինակ կերպով դարձավ մեր ողջ ազգի խորհրդանիշ և հասկանալի է,որ որպես կերպար անմահնալու էր նաև ազգային կերպարվեստում:Սակայն զարմանալին այն էր,որ գաղափարական մեքենան հանդուրժեց,որպեսզի հոգևորականի կերպարն արծարծվի առհասարակ և նույնիսկ թույլ տրվեց,որ նրա աճյունը տեղափոխվի Հայաստան:

Կոմիտասի կերպարին անդրադարձել է նկարչուհի Սուսաննա Ավանեսյանը,նա մի քանի անգամ անդրադարձել էայս թեմային:Առաջին գործը մի փոքրաածավալ աշխատանք է,որտեղ Կոմիտասը պատկերված է Էջմիածնի մայրավանքի լճի ափին,այնուհետև նույն թվականին ևս մեկ էտյուդ:Պահպանվում է նաև էսքիզները,բայց նկարչուհու հաջորդ՝մեծակտավ ստեղծագործությունը դարձավ ազգային գեղանկարչության պատմության փայլուն առժեքներից մեկը:Գունանկարչության և ստեղծագործության լեզվի այս յուրօրինակ գործում Կոմիտասը վառ հանդերձով է,այլ ոչ սև սքեմով,ինչպես սովոր էին տեսնել նրան:Ժողովուրդի հետ ամուր կապը Վարդապետի հետ և նրա հոգեբանական վիճակի վերլուծությունն այստեղ ստեղծագործությունում առավել քան համոզիչ և տպավորիչ է նկարչուհու վրձնում:

Արմեն Գասպարյան ասվերտաբան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1Գ.Ա.«Ակնարկ հայ երաժշտության պատմության» Գիրք 1 հրատ.Երևան 1963թ

2Կոմիտաս վարդապետ-Ուսումնասիրութիւններ եվ հոդուածներ։ Գիրք 2-րդ, Երևան 2007

3Հակոբովա Ռ.- Երաժշտության ուսուցման նշանակությունը և կազմակերպման ձևերը հանրակրթական դպրոցում, մեթոդական ձեռնարկ հանրակրթական դպրոցների երաժշտության դասատուների համար, «Հայրապետ» հրատ., Երևան 2017

4Հրանտ Խաչիկյան, Զայնակազմավորման հիմունքները երգարվեստում «ԵՊԿ» հրատարակչություն, Երևան, 2005.

5Ղազարյան Կ., Թադևոսյան Գ.- Երաժշտություն II-VII դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատ, Երևան 2013թ.

6Մազմանյան Մ.Ս., Երաժշտության դասավանդման մեթոդիկա, ձեռնարկ միջին դպրոցիուսուցիչների համար, Երևան «Լույս» 1969թ.

7«Կոմիտաս» Արթուր Շահնազարյան, Երևան 2012թ

8Միրզայան Մ., Երաժշտական գրագիտության և երգի ձեռնարկ,հայպետուսմանհրատ., Երևան 1958

9Յուզբաշյան Յու.Վ., Փահլևանյան Ա.Ա., Ավետիսյան Վ.«Երաժշտությունը 1-4- րդ դասարաններում» ուսուցչի մեթոդական ձեռնարկ Զանգակ-97, 2008թ.

10Յուզբաշյան Յու.Վ., Փահլևանյան Ա.Ա., Ավետիսյան «Երաժշտությունը 5-7-րդ դասարաններում» ուսուցչի ձեռնարկ Զանգակ-97, 2008թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ